ԱՐՄԵՆԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԶԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ. ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ[1]

19-րդ դարի վերջում հայության մոտ մշակութային ազգի գաղափարը որոշակի ձեւավորման փուլում էր: Այս պրոցեսում է հատկապես արվեստաբանությունը կայանում որպես մասնագիտություն: Արվեստաբանության հիմնական խնդիրներից էր վերարժեվորել հայ միջնադարյան ժառանգությունը որպես արվեստի պատմություն: Նմանօրինակ կարեւոր նպատակն իրականացնելու արդյունավետ միջոց էր հրապարակախոսությունը: Արվեստաբանության եւ հրապարակախոսության հարաբերության տեսանկյունից է, որ կդիտարկենք, ըստ էության առաջին հայ արվեստաբան՝ Գարեգին Հովսեփյանի գործունեությունը: Վերջինս ի ցույց է դնում հայերի շրջանում արվեստաբանության որպես մասնագիտության կայացումը:

Հովսեփյանը, սովորելով Գերմանիայի Հալլե-Վիտենբերգի, Բեռլինի, այնուհետեւ Լայպցիգի համալսարաններում, ուսումնասիրում է աստվածաբանություն, փիլիսոփայություն, հնագիտություն: 1897թ. ուսումն ավարտում է փիլիսոփայության դոկտորի աստիճանով եւ վերադառնում էջմիածին: 1900թ. սկսած Հովսեփյանը համագործակցում է *Արարատ* հանդեսի հետ եւ 1907-1908թթ., ինչպես նաեւ 1918-1919թթ. ղեկավարում խմբագրությունը:[2] 1908թ. *Արարատում* հայագիտական հոդվածներին եւ ուսումնասիրություններին լայն տեղ հատկացնելու համար Հովսեփյանը՝ կաթողիկոս Մատթեոս Բ. Կոստանդնուպոլսեցի (Իզմիրլյանի) պահանջով հեռացվում է խմբագրի պաշտոնից.

Ի նկատի առեալ, զի Արարատ ամսագիր ընդ Ձերով խմբագրութեամբ ոչ ծառայէ նպատակի իւրում որպես կրօնական թերթ եւ որպես պաշտօնական բերան Ս. Էջմիածնի, թէեւ քանիցս արարեալ եմք Ձեզ նկատողություն: Ուստի եւ այսու արձակեմք զՁեզ ի պաշտոնէ խմբագրութեան...:[3]

Այս դեպքը հնարավորություն է տալիս կանխադրելու, որ Հովսեփյանը նպատակ ուներ *Արարատը* վերածել հայկական պատմամշակութային ժառանգության գիտական ուսումնասիրման հարթակի: Ըստ այդմ, մամուլը դառնում է գիտության միջոցով ազգային գիտակցության սերմանման հնարավորություն:

Արվեստաբանությունը հենց այս համատեքստում է ստանում իր կոչումը: Մանյա Ղազարյանը՝ Հովսեփյանին դիտարկելով որպես հայ արվեստի պատմությունը ուսումնասիրող առաջին հայ արվեստաբան, գրում է.

Օտարների հետաքրքրությունը խթան հանդիսացավ հայ մշակույթի նկատմամբ որոշակի կարծիք ստեղծելուն, սակայն նրանց ուսումնասիրությունները կտրված էին հայ ժողովրդի կյանքի ընդհանուր զարգացման էությունից: Առաջին հետազոտողը, որը հայկական արվեստը գնահատեց նրա պատմական ու ազգային մտածողության հիմքի վրա՝ Գարեգին արքեպս. Հովսեփյանն էր:[4]

Իր գործունեությունը Հովսեփյանը սկսում է որպես ժողովրդական բանահյուսության հավաքագրող եւ ուսումնասիրող:[5] Նա համագործակցում էր հայ մեծանուն բանասեր, կրկին Գերմանիայում իր բարձրագույն ուսումը ստացած՝ Սանուկ Աբեղյանի հետ: Հովսեփյանը համարում էր, որ սեփական ժողովրդի ակունքներին մոտենալու եւ ազգային մշակույթի ձեւավորման հիմքերը բացահայտելու համար պետք է մանրազնին հետազոտել ժողովրդի կենցաղը, սովորույթները եւ բարոյական նորմերը: Այս առիթով նա գրել է.

Պատմությունը ազգի քաղաքակրթության աստիճանաբար զարգացումն է նկարագրում, իսկ առանց ժողովրդի ծանոթության անկարող ենք իմանալ, թե ի՞նչ առաջադիմություն է արել քաղաքակրթությունը ամբողջության մեջ, որի հիմքը հասարակ ժողովուրդն է: Ծանոթանալով ժողովրդի առօրյա կյանքի, նիստուկացի, սովորությունների, կրոնա-բարոյական գաղափարների եւ այլ հայացքների հետ՝ ընդունակ կլինենք որոշելու ժողովրդի հոգեկան զարգացման աստիճանը[6]:

Ենթադրելի է, որ «ազգի քաղաքակրթական զարգացում» ասելով՝ Հովսեփյանը նկատի ունի արդեն 19-րդ դարի կեսերից Եվրոպայում տիրող ազգերի արդիականացման գործընթացները: Հովսեփյանի գիտական ժառանգությունը բաժանվում է մի քանի կարեւոր խմբերի. կրոնա-եկեղեցական, պատմա-հնագիտական, մատենա-բանասիրական եւ մշակութային: Այս ամենի ուսումնասիրության համար պեղումներ եւ մշակութային արտեֆակտերի հավաքչություն անելուց բացի՝ նրա համար շատ կարեւոր ուսումնասիրման նյութ էին հանդիսանում ձեռագրերը. «Մենք պարծենալ կարող ենք ամենաքաղաքակիրթ ազգերի կողքին մեր 20.000 տուփ կամ հատոր ձեռագիրներով, ուր պահված են հայ մտքի եւ անցյալի ամբողջ արտադրությունը, մեր ազգային ամենամեծ հարստությունը»:[7] Հոգեւորական, բանասեր, արվեստաբան, պատմաբան՝ Գարեգին Հովսեփյանի հայացքում հայ միջնադարյան ժառանգության գիտական ուսումնասիրությունը պայման է հայ ժողովրդի որպես ազգ արդիանալու համար:

Սեփական միջնադարյան մշակույթը որպես ազգակերտման հնարավորություն ընկալելը 18-19-րդ դարերի Եվրոպայում, մասնավորապես Գերմանիայում մեծ տեղ գտած երեւույթ էր: Պետականության բացակայության պայմաններում, մշակույթը դրվում էր միացյալ ազգի եւ պետականության կայացման հիմքում: Գերմանական ռոմանտիկներից սկիզբ առնող այս միտումը 19-րդ դարում դրվեց հումանիտար գիտության բնագավառների՝ այդ թվում արվեստաբանության օրակարգում:[8] Այս սկզբունքով էր առաջնորդվում նաեւ Հովսեփյանը. հայերը կարիք ունեն անդրադառնալու իրենց անցյալի ամեն մի դեպքի ու առարկայի՝ որպեսզի աշխարհի պատմության մեջ ներկա լինեն որպես ազգ. «Ազգի գոյության հիմքը նրա անցյալի գիտակցությունն է, նրա մշակույթը: Պետք է ճանաչենք այդ մշակույթի իսկական արժեքը եւ պահենք զայն»:[9] Այս մեջբերումից պարզ է դառնում, որ Հովսեփյանի համար անցյալի գիտակցությունը եւ մշակույթը ազգի կայացման գրավականներն են: Արդյունքում ստացվում է, որ ժողովուրդը առանց սեփական մշակույթի պատմական գիտակցության չի կարող արդիանալ որպես ազգ:

Այժմ դիտարկենք Հովսեփյանի որոշ հոդվածներ, որոնք տպագրվել են *Արարատում*, երբ նա ղեկավարում էր ամսագրի խմբագրությունը: Այս հոդվածների միջոցով ցույց կտանք, թե հրապարակախոսության միջոցով ինչպե՞ս է տեղի ունենում հայ պատմական անցյալի գիտակցումը արվեստաբանության տեսանկյունից: Կտեսնենք, որ հայ միջնադարյան մշակութային ժառանգության վերարժեվորումը, որպես հայ արվեստի պատմություն, հետապնդում էր մի քանի նպատակներ. կառուցել մշակութային ազգ, հիմնավորել հայերի արդի ազգ լինելու բաղձանքը եւ հաստատել արվեստաբանությունը որպես գիտակարգ (դիսցիպլին), այն է՝ արվեստա*գիտություն*:

Արարատի 1907թ. հուլիս-օգոստոս համարում հանդիպում ենք Հովսեփյանի հեղինակած «Հայրենասիրություն եւ քրիստոնեություն» բնութագրական վերնագրով մի հոդվածի:[10] Վերջինս հիանալիորեն բացահայտում է այն արժեհամակարգը, որը ընկած է Հովսեփյանի արվեստագիտական գործունեության հիմքում: Հոդվածում Հովսեփյանը խոսում է հայրենասիրության գաղափարի առաջացման եւ զարգացման մասին: Նախ, նա բացատրում է, թե ինչ է հայրենասիրությունը, եւ ինչպես ինքն է համարում՝ դա այնպիսի բնական զգացմունք է, ինչպիսին մարդկանց սրտի խորքում եղած սերն է ծնողի նկատմամբ: Համարելով, որ հայրենասիրության սաղմը հայրենի տունն ու ընտանիքն է, Հովսեփյանը հղում է Պլատոնին. «Մարդը հասարակութեան քաղաքացիութեան համար է ստեղծուած, ասել է Պղատոնը եւ խմբակցութեան ամենահին ձեւը ընտանիքն է»:[11] Հովսեփյանը խոսելով ընտանիքի ձեւավորման մասին, շարու-

նակում է կարեւորել համայնքի, այնուհետեւ ազգի ծեւավորման գաղափարը: Համարելով, որ ազգը համախմբվածության արդյունք է՝ առաջացած բնական կյանքի գոյության կռվում, նա գրում է. «Մի ձեռքը ծափ չի տալիս, իսկ հազարավոր ձեռքեր են հարկաւոր կեանքի բարդ անիւը առաջ տանելու համար»:[12] Հովսեփյանը գտնում է, որ հայրենասիրության գաղափարը սկզբում լինելով բնազդ, հետագայում մարդկության զարգացմանը զուգահեռ դառնում է ավելի խորը գիտակցություն: Նա նշում է, որ նյութական շահերի պաշտպանության հետ զարգանում է հոգեւոր շահերի պաշտպանության գաղափարը եւ ավելացնում, որ անձնական փառքի, պատվի, ապահովության եւ բարօրության հետ զարգանում է ազգի ու հայրենիքի փառքի, ապահովության եւ բարօրության գաղափարը: Թվարկածները համարելով այն կարեւոր կետերը, որ ընկած են հին ազգերի մտածողության հիմքում՝ Հովսեփյանը գրում է.

Եւ այս գիտակցութիւնից է բխում հին ազգերի ամենաբարձր առաքինութիւնը՝ քաղաքացիութեան եւ հայրենասիրութեան զգացումը: Ազգութեան գաղափարը այն առանցքն էր, որի շուրջն էր պտտում հին ազգերի պատմութեան անիւը:[13]

Հովսեփյանը՝ հին ազգեր ասելով, նկատի ունի հույներին, հռոմեացիներին եւ հրեաներին: Խոսելով այս ազգերի մասին նա փորձում է ցույց տալ քրիստոնեության դերը հայրենասիրության գաղափարի փոփոխության մեջ: Իր կարծիքով քրիստոնեության հաստատումով հայրենասիրությունը ստացավ ավելի մաքուր ընկալում. «Նա մաքրեց հայրենասիրութիւնը եսական եւ բարբարոսական տարրերից եւ մի բարոյական զգացմունք դարձրեց այն»;[14] Ըստ Հովսեփյանի, փաստորեն, քրիստոնեությունը եկավ հաղթահարելու անտիկ քաղաքացիական հայրենասիրությունը՝ վերջինս վերածելով ընդհանուր մարդկային բարոյական զգացումի: Սա անտիկ հայրենասիրությունից դեպի քրիստոնեական հայրենասիրության շրջադարձի այն մեկնաբանությունն է, որը տալիս է գերմանական ռոմանտիկների առաջնեկ Յ. Գ. Հերդերը եւ որը ժամանակին այդքան հոգեհարազատ էր եղել Ստեփանոս Նազարյանցին:[15] Հովսեփյանի հայացքում ժամանակակից քրիստոնյա ազգերը հին քաղաքակրթության կրողներն են, ինչի գիտակցումն էլ նրանց արդի մշակութային ազգ լինելու գրավականն է:

Արարատի նույն համարում լույս է տեսնում Հովսեփյանի գրչին պատկանող մի գրախոսական հայ հին մատենագրության եւ Փոքր Հայքի մանրանկարչության մասին:[16] Գրախոսականի առաջին մասում Հովսեփյանը խոսում է 1904թ. Տյուբինգենի արքայական մատենադարանի կողմից ձեռք բերված 104 հատորից բաղկացած հայ ձեռագիր ժողովածուի մասին: Այս ձեռագրերի

ցուցակը կազմել են Ֆրանց Նիկոլաուս Ֆինքը եւ Լեւոն Գյանջեցյանը:[17] Հովսեփյանը բարձր է գնահատում այս ձեռագրերի ձեռքբերման փաստը, դրանց ցուցակագրումը եւ ավելացնում, որ այս աշխատության նախաբանը գրել է Տյուբինգենի մատենադարանապետ Կարլ Գայգերը: Հովսեփյանը գրում է. «Նախնեաց մատենագրութեան եւ պատմութեան ուսումնասիրութեան համար շատ կարեւոր նշանակութիւն ունի հայ ձեռագրերի մանրամասն ցուցակագրութիւնը»:[18] Այնուհետեւ հոդվածի երկրորդ մասում նա խոսում է Տյուբինգենի հայ ձեռագրերի նոր ժողովածուի հիման վրա՝ Ֆինքի կատարած ուսումնասիրությունների մասին: Հովսեփյանը այս աշխատանքը համարում է ոչ ամբողջական, քանի որ Ֆինքը հիմնվել է միայն վերը նշված ժողովածուի վրա: Բայց, ըստ նրա, դա չի նշանակում, որ աշխատանքը անպետք է. «Սակայն այս համառոտութիւնն արգելք չէ, որ ընթերցողը հայագիտութեան այս անմշակ ճիւղի մասին բավական որոշ գաղափար ստանայ»:[19] Հովսեփյանը նաեւ նշում է, որ մի առանձին գլխի մեջ հեղինակը հիմնվելով նախորդ մասնագետների ուսումնասիրությունների վրա՝ աշխատում է եվրոպացի հայագետների համար պարզել հայ հնագրության արժեքը, ձեռագրերի հնությունը որոշելու համար:

Գրախոսականի երրորդ մասը վերնագրված է «Փոքր Հայաստանի մանրանկարչությունը», որը վերաբերում է Յոզեֆ Ստրժիգովսկու համանուն աշխատությանը: Հովսեփյանը կարեւորում է Ստրժիգովսկուն իբրեւ բյուզանդական արվեստի մասնագետ եւ հեղինակություն, ում հայացքները բյուզանդական արվեստի ծագման մասին համարում է բոլորովին նոր: Հովսեփյանը խոսում է Տյուբինգենի համալսարանի ժողովածուում տեղ գտած մի ավետարանի՝ Ստրժիգովսկու կատարած ուսումնասիրության մասին: Հովսեփյանը հատուկ ուշադրություն է դարձնում, թե ինչպես է Ստրժիգովսկին նկարագրում ավետարանիչներին եւ նրանց ավետարանների սկզբնազարդերը: Ըստ Հովսեփյանի Ստրժիգովսկին ձգտում է ցույց տալ, որ.

Հայոց մեջ ասորական մանրանկարչութիւնից յետոյ սկսւում է բիւզանդական ազդեցութիւնը: Բայց այժմ նոր նիւթերի վրայ հիմնուելով պնդում է, որ թէ Հայոց եւ թէ բիւզանդական դեկորատիւ արուեստը կախումն ունին պարսկականից, որ միջին դարերում իշխող էր արեւելքում:[20]

Հովսեփյանը ավելացնում է, որ Տյուբինգենի ավետարանը հայ արվեստի պատմության համար այն կարեւոր նշանակությունն ունի, որ ցույց է տալիս, թե հայերն անմիջապես Պարսիկներից են յուրացրել ձեռագրերի արվեստը եւ ոչ միջնորդապես Բյուզանդիայից: Այստեղ հստակորեն երեւում է, որ Հովսեփյանը ձգտում է Ստրժիգովսկու միջոցով եւ նրա հետ միասին անհատականացնել հայկական արվեստը՝ ցույց տալով, որ այն սերում է հենց սկզբնաղբյուրից:

Արդյունքում Հայաստանի միջնադարյան արվեստը համազոր է բյուզանդականին: Ավելին, հիմնվելով Ստրժիգովսկու վրա, Հովսեփյանը անգամ ենթադրում է. «Գուցէ նոյն իսկ Բիւզանդացիք [ծեռագրի արվեստը] Հայերի միջնորդութեամբ իւրացրած լինին սկզբում եւ ապա բարձր զարգացման հասցնելուց յետոյ, Հայերին աւանդած Սելջուկեան տիրապետութեան ժամանակ»:[21] Փաստորեն այս գրախոսականում Հովսեփյանը հիմնվելով Ստրժիգովսկու վրա արդեն գիտական դիրքերից բարձրացնում է հայ արվեստի դերը Բյուզանդիա-Արեւելք միջմշակութային փոխանակություններում: Անցյալի իմացությունը որպես ազգային արդի գիտակցության հիմք ընդունելու սկզբունքը Հովսեփյանը գործնականում իրականացնում է արվեստաբանությամբ:

1907թ. *Արարատում* Հովսեփյանը հրատարակում է մեկ այլ «Մեր Հոգեւոր Հայրենիքը» հատկանշական հոդվածը:[22] Վերջինս իր հրապարակախոսական բնույթով մոտ է նախորդ «Հայրենասիրություն եւ քրիստոնեություն» հոդվածին: Այստեղ Հովսեփյանը վերստին գրում է, որ հայ ժողովրդի հոգեւոր հայրենիքը պետք է փնտրել նրա անցյալի մեջ: Նա համոզված է, որ անցյալն ուսումնասիրելով կարելի է հասկանալ ժողովրդի բնորոշ գծերն ու հատկությունները. «այնտեղ է պատկերանում ժողովրդի հոգեւոր կեանքի եւ ընդհանուր քաղաքակրթութեան մեջ ցոյց տուած զարգացումը: Պատմութիւնը ազգերի կեանքի հայելին է, իսկ հայելու մեջ անդրադառնում է ճիշդ պատկեր»:[23] Հայերը չեն կարող ունենալ արդիություն, եթե չեն ուսումնասիրում սեփական անցյալը.

Հայոց նոր արուեստ ու քաղաքակրթութիւն ծագել եւ ազգային դրոշմ ու գոյն կարող է ստանալ միայն նախնեաց արուեստի եւ քաղաքակրթութեան ուսումնասիրութեամբ:[24]

Սկնհայտ է, որ արվեստաբանության կոչումը անցյալի արվեստի ուսումնասիրությամբ արդի արվեստ եւ քաղաքակրթության ապահովելն է: Փաստորեն արվեստաբանությունը ոչ թե «մաքուր գիտություն» է, այլ «հոգեւոր հայրենիքի» կառուցման ու հիմնավորման գիտական գործունեություն, որը էապես իրականացվում է հրապարակախոսությամբ:

---

[1] Իմ շնորհակալությունն եմ հայտնում Վարդան Ազատյանին՝ տեքստի գաղափարական, ոճական եւ կառուցվածքային դեկավարման համար:

[2] *Արարատը* հրատարակվել է 1868-1919թթ.: Լինելով Կովկասի առաջին հայագիտական հանդեսը մեծապես նպաստում էր գիտության այդ ճյուղի կայացմանն ու զարգացմանը: Հանդեսում տպագրվել են մատենագիտական բնագրեր, վավերագրեր, հիշատակարաններ, ուղեգրություններ, միջնադարյան հայ տաղերգուների երգեր եւ այլն:

[3] Տրված է՝ Գէորգ Արքեպիսկոպոս, «Պաշտոնականք», *Արարատ*, թիվ ԺԱ, 1908, էջ 3:

[4] Տրված է՝ Մանյա Ղազարյան, «Հայ արվեստի երախտավորը. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան», *Էջմիածին*, թիվ 5, 1979թ., էջ 34:

[5] Հովսեփյանի գործունեության այս բնագավառին հատուկ հոդված-ուսումնասիրություն է նվիրել Ս. Բ. Հարությունյանը. «Գարեգին Հովսեփյանը որպես բանագետ» (ծննդյան 100-ամյակի առթիվ), *Պատմա-բանասիրական հանդես*, թիվ 1, 1968, էջ 147-154: Տես նաեւ Խ. Քոլանջյան «Հայ ծեռագրաագիտության մեծանուն վաստակավորը» *Էջմիածին*, 1962, թիվ 6,7,8

[6] Տրված է՝ Ղազարյան, «Հայ արվեստի երախտավորը», էջ 7:

[7] Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, *Դեպի լույս եւ կյանք*, Անթիլիաս, 1947, էջ 235:

[8] Այս մասին տես Юрген Хабермас "Что такое народ? К политическому самопониманию наук о духе в домартовский период революции 1848 года, на примере Франкфуртского собрания германистов 1846 года", *Политические работы* (Москва: Праксис, 2005), стр. 197-208:

[9] Տրված է՝ Ղազարյան, «Հայ արվեստի երախտավորը», էջ 43:

[10] Գարեգին Հովսեփյան, «Հայրենասիրություն եւ Քրիստոնեություն», *Արարատ*, Յուլիս-Օգոստոս, թիվ է-Ը., 1907, էջ 616-625:

[11] Հովսեփյան, «Հայրենասիրություն եւ Քրիստոնեություն», էջ 617:

[12] Հովսեփյան, «Հայրենասիրություն եւ Քրիստոնեություն», էջ 617:

[13] Հովսեփյան, «Հայրենասիրություն եւ Քրիստոնեություն», էջ 617:

[14] Գարեգին Հովսեփյան, «Հայրենասիրություն եւ Քրիստոնեություն», *Արարատ*, Յուլիս-Օգոստոս, թիվ է-Ը., 1907, էջ 619:

[15] Այս մասին տես՝ Վարդան Ազատյան, *Արվեստաբանություն եւ ազգայնականություն. 19-րդ դարի Գերմանիայի եւ հետմորհորդային Հայաստանի միջեւ*. գլուխ «Հայերի Հերդերը: Ստեփանոս Նազարյանց եւ Ստեփանոս Սապահ Գյուլյան», (անտիպ):

[16] Գարեգին Հովսեփյան, «Գրախոսական», *Արարատ*, Յուլիս-Օգոստոս, համար է-Ը., 1907, էջ 727-741:

[17] Նրանք հայտնի են որպես հայ-գերմանական *Հանդես հայագիտության* (*Zeitschrift fur armenische Philologie*) թերթի խմբագիրներ եւ աշխատակիցներ: Նրանց հետ համագործակցել է նաեւ Յակոբ Մանանդյանը: Հանդեսը ուներ գիտական ուղղվածություն, որտեղ տպագրվում էին պատմության, լեզվաբանության եւ ազգագրության վերաբերյալ նյութեր:Պարբերագրքի հոդվածների մի մասը տպագրվել են գերմաներեն:

[18] Գարեգին Հովսեփյան, «Գրախոսական», *Արարատ*, Յուլիս-Օգոստոս, համար է-Ը., 1907, էջ 727:

[19] Գարեգին Հովսեփյան, «Գրախոսական», *Արարատ*, Յուլիս-Օգոստոս, համար է-Ը., 1907, էջ 731:

[20] Գարեգին Հովսեփյան, «Գրախոսական», *Արարատ*, Յուլիս-Օգոստոս, համար է-Ը., 1907, էջ 736:

[21] Հովսեփյան, «Գրախոսական», էջ 736:

[22] Գարեգին Հովսեփյան, «Մեր հոգեւոր հայրենիքը», *Արարատ*, Սեպտեմբեր, համար Թ, 1907, էջ 768-775:

[23] Գարեգին Հովսեփյան, «Մեր հոգեւոր հայրենիքը», *Արարատ*, Սեպտեմբեր, համար Թ, 1907, էջ 770:

[24] Հովսեփյան, «Մեր հոգեւոր հայրենիքը», էջ 772: